

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՄԲԻՈՆ

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ 1903/B05 «Հռոմեական մասնավոր իրավունքի հիմունքներ»

Որակավորման  
աստիճան՝

բակալավրի կրթական ծրագիր

Կազմել է՝

իրավ. գիտ. թեկն., դոց. Վ. Ավետիսյանը

ԵՊՀ հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ - 2013

## ԾՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

### 1903/B05. Հռոմեական մասնավոր իրավունք (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (դասախոսություն՝ 24, սեմինար 8, ինքնուրույն աշխատանք՝ 28)  
2-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

#### Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է Հռոմեական մասնավոր իրավունքի հենքի վրա ուսանողներին ծանոթացնել քաղաքացիական իրավունքի հիմնարար ինստիտուտներին, ժամանակակից քաղաքացիական իրավունքում օգտագործվող լատիներեն տերմինաբանությանը, Հռոմեական մասնավոր իրավունքի կողմից մշակված հիմնարար ինստիտուտներին ու հասկացություններին, որոնք այժմ էլ չեն կորցրել, ինչպես իրենց գործնական, այնպես էլ տեսական նշանակությունը:

#### Կրթական վերջնարդյունքները

#### Դասընթացի հաջող ավարտին ուսանողը Կունենա

##### *Գիտելիք և իմացություն*

- մասնավոր իրավունքի հիմնարար ինստիտուտների և դրանց հարաբերակցության վերաբերյալ,

*Ունակ կլինի.*

##### *(բուն մասնագիտական կարողություններ)*

- սահմանազատել հանրային և մասնավոր իրավունքների հասկացությունն ու առանաձնահատկությունները, քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցելու համար անձին անհրաժեշտ հատկանիշների ամբողջությունը,
- հասկանալ իրային և պարտավորական իրավահարաբերությունների հասկացությունն ու էությունը,
- տիրապետել հռոմեական իրավունքին հայտնի պայմանագրերի առանձին տեսակներին, Հռոմում առկա ընտանեկան և ժառանգման իրավահարաբերությունների էությանը:

##### *(ընդհանրական կարողություններ)*

- օգտվել մասնավոր իրավունքի հիմք հանդիսացած սկզբնաղբյուրներից, տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից,
- վերլուծել փաստեր, կատարել հետևություններ,
- ստեղծագործաբար կիրառել ու զարգացնել ունեցած գիտելիքները:

#### Գիտելիքների ստուգման ձևերը, մեթոդները և գնահատման չափանիշները

Նախատեսված է երկու ընթացիկ ստուգում յուրաքանչյուրը՝ 9 միավոր առավելագույն արժեքով:

**Առաջին ստուգումը** գրավոր է: Այն իրականացվում է համակցված թեստի և գրավոր առաջադրանքների ձևով: Գրավոր առաջադրանքը բաղկացած է 80 հարցադրումներից: 0-25 ճիշտ պատասխանը գնահատվում է 0 միավոր, 26-32-ը՝ 1 միավոր, 33-38-ը՝ 2

միավոր, 39-44-ը՝ 3 միավոր, 45-50-ը՝ 4 միավոր, 51-56-ը՝ 5 միավոր, 57-62-ը՝ 6 միավոր, 63-68-ը՝ 7 միավոր, 69-74-ը՝ 8 միավոր, 75-80-ը՝ 9 միավոր:

**Երկրորդ ստուգումը** բանավոր է: Երկրորդ ստուգման առաջադրանքը պարունակում է 3 հարցադրում, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը՝ 3 միավոր:

Լուծարքն անցկացվում է բանավոր: Այն պարունակում է 4 հարցադրում, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը՝ 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Առաջին ընթացիկ ստուգումը ներառում է թեմաներ 1-ից մինչև թեմա 8-ի 4-րդ պարագրաֆը ներառյալ, երկրորդ ընթացիկ ստուգումը ներառում է թեմա 8-ի 5-րդ պարագրաֆից մինչև թեմա 12-ը ներառյալ:

## Դասընթացի բովանդակությունը

### **Թեմա 1. «Հռոմեական մասնավոր իրավունք» առարկայի ընդհանուր բնութագիրը** (դասախոսություն՝ 1 ժամ)

1. Հռոմեական իրավունքի կայացման պատմությունը
2. Հռոմեական մասնավոր իրավունքի առարկան և համակարգը

**Հարցեր 1-2** Անցկացվում է ակնարկային ինտերակտիվ դասախոսություն:

### **Թեմա 2. Հռոմեական մասնավոր իրավունքի աղբյուրները** (դասախոսություն՝ 2 ժամ)

1. Իրավունքի աղբյուրի հասկացությունը և տեսակները: Իրավունքի ճանաչման աղբյուրները
2. Սովորույթները, օրենքները, կայսերական սահմանադրությունները, պրետորական էդիկտները և իրավաբանների պատասխանները (մեկնաբանությունները) որպես հռոմեական մասնավոր իրավունքի աղբյուր

**Հարցեր 1-2** Անցկացվում է ակնարկային ինտերակտիվ դասախոսություն: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող աղբյուրը՝ Ավետիսյան Վ.Դ., Հռոմեական մասնավոր իրավունք, Եր. 2013 թ.):

### **Թեմա 3. Հռոմեական մասնավոր իրավունքի սուբյեկտները** (դասախոսություն՝ 2 ժամ)

1. Անձանց դասակարգումը Հռոմում
2. Հռոմի քաղաքացիների իրավասուբյեկտությունը
3. Ստրուկների և ազատ արձակվածների իրավական վիճակը
4. Կոլոնների իրավական վիճակը
5. Իրավաբանական անձինք

**Հարցեր 1-5** Անցկացվում է ակնարկային ինտերակտիվ դասախոսություն: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող աղբյուրը՝ Ավետիսյան Վ.Դ., Հռոմեական մասնավոր իրավունք, Եր. 2013 թ.):

**Հարցեր 1-5** Ինքնուրույն աշխատանք՝ ուսանողներն ուսումնասիրում են թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն (աղբյուրը՝ Римское частное право. Под ред. проф. И.Б. Новицкого и проф. И.С. Перетерского. М. 1999, Пухан И., Поленак-Акимовская М. Римское право, М. 2000):

### **Թեմա 4. Իրային իրավունք և իրերի մասին ուսմունք** (դասախոսություն՝ 1 ժամ, սեմինար 1 ժամ)

1. Իրերի հասկացությունը և դասակարգումը հռոմեական իրավունքում
2. Իրային իրավունքների հասկացությունը և դրանց տեսակները

**Հարցեր 1-2** Անցկացվում է ակնարկային ինտերակտիվ դասախոսություն: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող աղբյուրը՝ Ավետիսյան Վ.Դ., Հռոմեական մասնավոր իրավունք, Եր. 2013 թ.):

**Հարցեր 1-2** Անցկացվում է սեմինար պարապմունք՝ բանավեճային ստուգազրույց ուսումնամեթոդական ուղեցույցում և սույն ծրագրում տրված հարցերով:

**Հարցեր 1-2** Ինքնուրույն աշխատանք՝ ուսանողներն ուսումնասիրում են թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն (աղբյուրը՝ Римское частное право. Под ред. проф. И.Б. Новицкого и проф. И.С. Перетерского. М. 1999, Пухан И., Поленак-Акимовская М. Римское право, М. 2000):

#### **Թեմա 5. Տիրապետման հասկացությունը, տեսակները և պաշտպանությունը** (դասախոսություն՝ 1 ժամ)

1. Տիրապետման հասկացությունը:
2. Տիրապետման տեսակները և պաշտպանությունը:

**Հարցեր 1-2** Անցկացվում է ակնարկային ինտերակտիվ դասախոսություն: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող աղբյուրը՝ Ավետիսյան Վ.Դ., Հռոմեական մասնավոր իրավունք, Եր. 2013 թ.):

#### **Թեմա 6. Սեփականության իրավունք** (դասախոսություն՝ 3 ժամ, սեմինար՝ 1 ժամ)

1. Սեփականության իրավունքի հասկացությունը, տեսակները և բովանդակությունը
2. Սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակները և սեփականության իրավունքի դադարումը
3. Սեփականության իրավունքի պաշտպանությունը և հայցային վաղեմությունը

**Հարցեր 1-3** Անցկացվում է ակնարկային ինտերակտիվ դասախոսություն: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող աղբյուրը՝ Ավետիսյան Վ.Դ., Հռոմեական մասնավոր իրավունք, Եր. 2013 թ.):

**Հարցեր 1-3** Անցկացվում է սեմինար պարապմունք՝ բանավեճային ստուգազրույց ուսումնամեթոդական ուղեցույցում և սույն ծրագրում տրված հարցերով:

#### **Գլուխ 7. Ուրիշի իրերի նկատմամբ իրավունքներ** (դասախոսություն՝ 2 ժամ, սեմինար՝ 1 ժամ)

1. Սերվիտուտային իրավունքը Հին Հռոմում, հասկացությունը և տեսակները
2. Սերվիտուտային իրավունքի ծագումը, դադարումը և պաշտպանությունը
3. Հողի երկարաժամկետ վարձակալության պայմանագրեր /*jus perpetuum, emphiteusis* և *superficies*/

**Հարցեր 1-3** Անցկացվում է ակնարկային ինտերակտիվ դասախոսություն: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող աղբյուրը՝ Ավետիսյան Վ.Դ., Հռոմեական մասնավոր իրավունք, Եր. 2013 թ.):

**Հարցեր 1-3** Անցկացվում է սեմինար պարապմունք՝ բանավեճային ստուգազրույց ուսումնամեթոդական ուղեցույցում և սույն ծրագրում տրված հարցերով:

**Թեմա 8. Պարտավորական իրավունք**  
(դասախոսություն՝ 4 ժամ, սեմինար՝ 2 ժամ)

1. Պարտավորական իրավունքի հասկացությունը, պարտավորական իրավահարաբերությունները և պարտավորության տարրերը
2. Պարտավորական իրավահարաբերությունների ծագման հիմքերը և պարտավորությունների դասակարգումը
3. Անձանց բազմաթիվությամբ պարտավորություններ
4. Պարտատիրոջ և պարտապանի փոփոխությունը
5. Պայմանագրերի /contractus/ հասկացությունը և տեսակները
6. Պայմանագրի վավերության պայմանները
7. Պայմանագրի կնքման կարգը և բովանդակությունը
8. Դելիկտներից բխող պարտավորությունները /obligatio ex delicto/
9. Քվազիպայմանագրեր /obligatio quasi ex contractus/
10. Քվազիդելիկտներ /obligatio quazi ex delicto/
11. Պարտավորությունների կատարման ապահովման միջոցները
12. Պատասխանատվությունը պարտավորությունների չկատարման համար և դրա արդյունքում վրա հասնող հետևանքները
13. Պարտավորությունների դադարումը

**Հարցեր 1-13** Անցկացվում է ակնարկային ինտերակտիվ դասախոսություն: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող աղբյուրը՝ Ավետիսյան Վ.Դ., Հռոմեական մասնավոր իրավունք, Եր. 2013 թ.):

**Հարցեր 1-13** Անցկացվում է սեմինար պարապմունք՝ բանավեճային ստուգազրույց ուսումնամեթոդական ուղեցույցում և սույն ծրագրում տրված հարցերով:

**Հարցեր 1, 3, 7, 8, 12** Ինքնուրույն աշխատանք՝ ուսանողներն ուսումնասիրում են թեմային վերաբերող լրացուցիչ գրականությունը (աղբյուրը՝ Римское частное право. Подред. проф. И.Б. Новицкого и проф. И.С. Перетерского. М. 1999, Пухан И., Поленак-Акимовская М. Римское право, М. 2000, Барон Ю. Система римского гражданского права. Санкт-Петербург, 2005):

**Թեմա 9. Հռոմեական իրավունքին հայտնի պայմանագրերի առանձին տեսակները**  
(դասախոսություն՝ 3 ժամ, սեմինար՝ 1 ժամ)

1. Ձևականացված կամ ֆորմալ պայմանագրեր
2. Վերբալ կամ բանավոր պայմանագրեր
3. Լիտերալ կամ գրավոր պայմանագրեր
4. Կոնսենսուալ պայմանագրեր
5. Ռեալ պայմանագրեր

**Հարցեր 1-5** Անցկացվում է ակնարկային ինտերակտիվ դասախոսություն: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող աղբյուրը՝ Ավետիսյան Վ.Դ., Հռոմեական մասնավոր իրավունք, Եր. 2013 թ.):

**Հարցեր 1-5** Անցկացվում է սեմինար պարապմունք՝ բանավեճային ստուգազրույց ուսումնամեթոդական ուղեցույցում և սույն ծրագրում տրված հարցերով:

**Հարցեր 4, 5** Ինքնուրույն աշխատանք՝ ուսանողներն ուսումնասիրում են թեմային վերաբերող լրացուցիչ գրականությունը (աղբյուրը՝ Римское частное право. Подред. проф. И.Б. Новицкого и проф. И.С. Перетерского. М. 1999, Пухан И., Поленак-

Акимовская М. Римское право, М. 2000, Барон Ю. Система римского гражданского права. Санкт-Петербург, 2005):

### **Թեմա 10. Ընտանեկան իրավահարաբերությունները Հռոմում** (դասախոսություն՝ 1 ժամ, սեմինար՝ 1 ժամ)

1. Ընտանեկան իրավունքը և հռոմեական ընտանիքը
2. Հայրական իրավունքի (patria potestas) հասկացությունը, ծագման և դադարման հիմքերը
3. Ամուսնության հասկացությունը և էությունը
4. Խնամակալություն և հոգաբարձություն

**Հարցեր 1-4** Անցկացվում է ակնարկային ինտերակտիվ դասախոսություն: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող աղբյուրը՝ Ավետիսյան Վ.Դ., Հռոմեական մասնավոր իրավունք, Եր. 2013 թ.):

**Հարցեր 1-4** Անցկացվում է սեմինար պարապմունք՝ բանավեճային ստուգազրույց ուսումնամեթոդական ուղեցույցում և սույն ծրագրում տրված հարցերով:

### **Թեմա 11. Ժառանգման իրավունք** (դասախոսություն՝ 2 ժամ, սեմինար՝ 1 ժամ)

1. Ժառանգման իրավունքի հասկացությունը և ժառանգման կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունները
2. Ժառանգումն ըստ օրենքի
3. Ժառանգումն ըստ կտակի
4. Անհրաժեշտ ժառանգման իրավունք
5. Ժառանգության ընդունումը

**Հարցեր 1-5** Անցկացվում է ակնարկային ինտերակտիվ դասախոսություն: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող աղբյուրը՝ Ավետիսյան Վ.Դ., Հռոմեական մասնավոր իրավունք, Եր. 2013 թ.):

**Հարցեր 1-5** Անցկացվում է սեմինար պարապմունք՝ բանավեճային ստուգազրույց ուսումնամեթոդական ուղեցույցում և սույն ծրագրում տրված հարցերով:

**Հարցեր 2, 3** Ինքնուրույն աշխատանք՝ ուսանողներն ուսումնասիրում են թեմային վերաբերող լրացուցիչ գրականությունը (աղբյուրը՝ Римское частное право. Под ред. проф. И.Б. Новицкого и проф. И.С. Перетерского. М. 1999, Пухан И., Поленак-Акимовская М. Римское право, М. 2000, Барон Ю. Система римского гражданского права. Санкт-Петербург, 2005):

### **Թեմա 12. Քաղաքացիական իրավունքների պաշտպանության ձևերը** (դասախոսություն՝ 2 ժամ)

1. Իրավունքի իրականացումը և պաշտպանությունը
2. Քաղաքացիական դատավարության փուլերը և տեսակները
3. Հայցի հասկացությունը և տեսակները

#### 4. Սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության հատուկ միջոցները

**Հարցեր 1-4** Անցկացվում է ակնարկային ինտերակտիվ դասախոսություն: Ուսանողները ներկայանում են նախապես պատրաստված (պահանջվող աղբյուրը՝ Ավետիսյան Վ.Դ., Հռոմեական մասնավոր իրավունք, Եր. 2013 թ.):

**Հարցեր 1-4** Ինքնուրույն աշխատանք՝ ուսանողներն ուսումնասիրում են թեմային վերաբերող լրացուցիչ գրականությունը (աղբյուրը՝ Римское частное право. Подред. проф. И.Б. Новицкого и проф. И.С. Перетерского. М. 1999, Пухан И., Поленак-Акимовская М. Римское право, М. 2000, Барон Ю. Система римского гражданского права. Санкт-Петербург, 2005):

#### Առաջին ստուգման հարցաշար

1. Հասարակական հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը հռոմեական իրավունքում ինչ մասերի էին բաժանվում:
2. Անձանց դասակարգումը Հռոմում:
3. Ստրուկտուրայի իրավական վիճակը:
4. Կոլոնների իրավականա վիճակը:
5. Իրավաբանական անձինք:
6. Որոնք են իրային իրավունքին բնորոշ հատկանիշները:
7. Ինչու էր կայանում *jus postliminii* կոչվող ինստիտուտի էությունը:
8. Կայսերական ռեկրիպտը որպես իրավունքի աղբյուրի տեսակ:
9. Հռոմի քաղաքացու իրավունակության և գործունակության սահմանումները:
10. Ըստ Ուլպիանոսի *jus privatum*-ի նորմերով ինչպիսի հարաբերություններ էին կարգավորվում:
11. Տեսականիշով որոշվող և անհատապես որոշվող իրերի հասկացությունը:
12. *Jus civile*-ի նորմերով ինչպիսի հարաբերություններ էին կարգավորվում:
13. Բացատրեք իրերի գլխավորի և պատկանելիքի դասակարգման գործնական նշանակությունը:
14. Իրային իրավունքին բնորոշ հատկանիշները:
15. Հռոմեական պետության պատմության պարբերացումը կատարելիս այն պայմանականորեն ինչպիսի շրջանների է բաժանվում:
16. Հուստինիանոսը ինչ նպատակ էր հետապնդում՝ վերացնելով *jus ventus*-ի և *jus novum*-ի միջև գոյություն ունեցող տարբերությունները:
17. Մասնավոր իրավունքը ինչ մասերի էր բաժանվում:
18. Կայսերական էդիկտը որպես իրավունքի աղբյուրի տեսակ:
19. Կայսերական դեկրետը որպես իրավունքի աղբյուրի տեսակ:
20. Կայսերական մանդատը որպես իրավունքի աղբյուրի տեսակ:
21. Սովորույթը որպես իրավունքի աղբյուրի տեսակ:
22. Իրավաբանների մեկնաբանությունները որպես իրավունքի աղբյուրի տեսակ:
23. Հռոմում ֆիզիկական անձանց միավորումների ինչպիսի տեսակներ գոյություն ունեին:
24. Ինչպես էր կոչվում Հուստինիանոսի կոդիֆիկացիայի առաջին մասը:
25. Շրջանառունակությունից ելնելով իրերը ինչ խմբերի էին բաժանվում:
26. Հռոմի քաղաքացու իրավասուբյեկտությունն ինչ տարրերից էր բաղկացած:



27. Բացատրեք իրերի սպառելիի և ոչ սպառելիի դասակարգման գործնական նշանակությունը:
28. Անձի իրավունակությունը *Capitis deminutio minima*-ի դեպքում ինչպիսի փոփոխության էր ենթարկվում:
29. Որպես իրավունակության սահմանափակման հատուկ հիմք երբ էր կիրառվում *Intestabilitas*-ը:
30. Որպես իրավունակության սահմանափակման հատուկ հիմք երբ էր կիրառվում *Infamia*-ն:
31. Էմանսիպացիայի հասկացությունը և էությունը:
32. Հռոմեական իրավունքում ինչ էր հասկացվում իր */res/* եզրույթի ներքո:
33. Ինչով էին միմյանցից տարբերվում մանցիպացիոն և ոչ մանցիպացիոն իրերը:
34. Ըստ Ուլփիանոսի *jus publicum*-ի նորմերով ինչպիսի հարաբերություններ էին կարգավորվում:
35. Ինչով էին միմյանցից տարբերվում շարժական և անշարժ իրերը:
36. Անձի իրավունակությունը *Capitis deminutio maxima*-ի դեպքում ինչպիսի փոփոխության էր ենթարկվում:
37. Բացատրեք իրերի բաժանելիի և անբաժանելիի դասակարգման գործնական նշանակությունը:
38. Որոնք էին հռոմեական մասնավոր իրավունքի աղբյուրի տեսակները:
39. Թվարկեք հռոմեական իրավունքին հայտնի իրային իրավունքների տեսակները:
40. Անձի իրավունակությունը *Capitis deminutio media*-ի դեպքում ինչպիսի փոփոխության էր ենթարկվում:
41. Որպես իրավունակության սահմանափակման հատուկ հիմք երբ էր կիրառվում *turpitudō*-ն:
42. Տիրապետման հասկացությունը:
43. Տիրապետման տեսակները /իրական տիրապետում */possessio, possessio civiles/*, սովորական տիրապետում */detento, possessio naturalis//*:
44. Տիրապետման պաշտպանությունը /տիրապետման հայց */actio possessoria/* և պետիտորիական հայց */actio petitoria//*:
45. Օրինական տիրապետման հասկացությունը:
46. Անօրինական տիրապետման հասկացությունը:
47. Անօրինական տիրապետման ինչպիսի տեսակներ գոյություն ունեին:
48. Սեփականության իրավունքի հասկացությունը:
49. Սեփականության իրավունքի տեսակները:
50. Սեփականության իրավունքի բովանդակությունը:
51. Սեփականության իրավունքի ձեռքբերման սկզբնական եղանակի հասկացությունը:
52. Սեփականության իրավունքի ձեռքբերման ածանցյալ եղանակի հասկացությունը:
53. Տիրազուրկ գույքին տիրանալը որպես սեփականության իրավունքի ձեռքբերման սկզբնական եղանակ:
54. Սպեցիֆիկացիան որպես սեփականության իրավունքի ձեռքբերման սկզբնական եղանակ:
55. Իրերի միացումը որպես սեփականության իրավունքի ձեռքբերման սկզբնական եղանակ:
56. Ձեռքբերման վաղեմությունը որպես սեփականության իրավունքի ձեռքբերման սկզբնական եղանակ:
57. Գույքի նկատմամբ անձի ունեցած սեփականության իրավունքի դադարման հիմքերը:
58. Սեփականության իրավունքի պաշտպանության հասկացությունը:

59. Վինդիկացիոն հայցի հասկացությունը և էությունը /actio vindicatio/:
60. Նեգատոր հայցի հասկացությունը և էությունը /actio negatoria/:
61. Հայցային վաղեմության հասկացությունը և էությունը:
62. Հայցային վաղեմության ընդհատումը և կասեցումը:
63. Իրային իրավունքների հասկացությունը և տեսակները:
64. Սերվիտուտային իրավունքի հասկացությունը:
65. Հողային սերվիտուտների /servitus praedictorum/ հասկացությունը և տեսակները:
66. Անձնական սերվիտուտներ /servitus personarum/ հասկացությունը և տեսակները:
67. Որոնք էին գյուղական հողային սերվիտուտները /servitutes praedictorum rusticorum/:
68. Որոնք էին քաղաքային հողային սերվիտուտները /servitutes praedictorum urbanorum/:
69. Սերվիտուտային իրավունքի ծագումը:
70. Սերվիտուտային իրավունքի դադարումը:
71. Սերվիտուտային իրավունքի պաշտպանությունը:
72. Որոնք էին գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության պայմանագրերի տեսակները:
73. Շինարարական նշանակության հողերի վարձակալության պայմանագրի հասկացությունը և էությունը /superficies/:
74. Պարտավորական իրավունքի հասկացությունը:
75. Պարտավորական իրավունքը իրային իրավունքից սահմանազատելու համար հիմք հանդիսացող չափորոշիչները:
76. Պարտավորական իրավահարաբերության տարրերը:
77. Պարտավորական իրավահարաբերությունների ծագման հիմքերը:
78. Պարտավորությունների դասակարգումը:
79. Անձանց բազմաթիվությամբ պարտավորությունների հասկացությունը:
80. Անձանց բազմաթիվությամբ պարտավորությունների տեսակները:
81. Բաժնային պարտավորությունների հասկացությունը:
82. Համապարտ պարտավորությունների հասկացությունը և տեսակները:
83. Համապարտ պարտավորությունների ծագման հիմքերը և տեսակները:
84. Պարտավորության մեջ անձանց փոփոխության հասկացությունը և էությունը:
85. Պահանջի զիջման հասկացությունը և էությունը:
86. Որ դեպքերում էր արգելվում իրականացնել պահանջի զիջում:
87. Պարտքի փոխանցման հասկացությունը և էությունը:

### **Երկրորդ ստուգման հարցաշար**

1. Հռոմեական իրավունքում ինչպես էին կոչվում և բնորոշվում պայմանագրերը:
2. Ինչ էին իրենցից ներկայացնում պակտերը և պակտերի ինչ տեսակներ գոյություն ունեին:
3. Կողմերի ունեցած իրավունքներից և պարտականություններից ելնելով պայմանագրերը ինչ տեսակների էին բաժանվում, դրանց լատիներեն անվանումը:
4. Միակողմ և երկկողմ պայմանագրերի հասկացությունը:
5. Երկկողմ պայմանագրերը ինչ խմբերի էին բաժանվում:
6. Պայմանագրի իրավական հիմքի որոշակիությունից ելնելով պայմանագրերը ինչ տեսակների էին բաժանվում, դրանց ընդհանուր բնութագիրը:
7. Պայմանագրի կնքման ձևից ելնելով դրանք ինչ տեսակների էին բաժանվում, դրանց ընդհանուր բնութագիրը:

8. Ելնելով կնքված համարվելու և իրավունքների ու պարտականությունների առաջացման պահից՝ պայմանագրերը ինչ տեսակների էին բաժանվում, դրանց ընդհանուր բնութագիրը:
9. Հատուցելի և անհատույց պայմանագրերի բնորոշումը
10. Հռոմեական իրավունքում ինչ էր հասկացվում պայմանագրի վավերություն եզրույթի ներքո և որոնք էին պայմանագրի վավերության պայմանները:
11. Պայմանագրի վավերության պայմաններից՝ կողմերին և բովանդակությանը ներկայացվող պայմանները
12. Պայմանագրի վավերության պայմաններից՝ ձևին և կամահայտնությանը ներկայացվող պայմաններ
13. Խաբեության ընդհանուր բնութագիրը:
14. Մոլորության ընդհանուր բնութագիրը, չիմացությունը կամ սխալ պատկերացումը ինչին կարող էր վերաբերել:
15. Ֆիզիկական կամ հոգեբանական բռնությունը կամ այդպիսի բռնություն կիրառելու սպառնալիքը պայմանագրի վավերության վրա ինչ ձևով կարող էր անդրադարձնալ, պայմանագիրը անվավեր ճանաչելուց հետո ինչպիսի հետևանքներ էին կիրառվում:
16. Պայմանագրի բովանդակություն ասելով ինչ էր հասկացվում և պարտավորության բովանդակության մեջ մտնող պայմանները հռոմեացի իրավաբանների կողմից ինչ խմբերի էին բաժանվում, նշեք դրանց լատիներեն անվանումներ:
17. Պայմանագրի էական պայմանների ընդհանուր բնութագիրը:
18. Պայմանագրի սովորական և պատահական պայմանների ընդհանուր բնութագիրը:
19. Պայմանագրի կնքման կարգը:
20. Քվազիպայմանագրային պարտավորությունների ընդհանուր բնութագիրը և թվարկեք դրանց հիմնական տեսակները:
21. Առանց հանձնարարության ի շահ ուրիշի գործողությունների կատարման ընդհանուր բնութագիրը:
22. Անհիմն հարստանալու ընդհանուր բնութագիրը:
23. Ինչ ենք հասկանում դելիկտային պարտավորություններ ասելով, որոնք էին հռոմեական իրավունքին հայտնի դելիկտային պարտավորությունների տեսակները:
24. Թվարկեք դելիկտային պարտավորությունների ծագման համար անհրաժեշտ տարրերը:
25. Ինչով էին միմյանցից տարբերվում դելիկտային և պայմանագրային պարտավորությունները:
26. Թվարկեք 12 աղյուսակների օրենքով նախատեսված դելիկտները և ներկայացրեք դրանց էությունը (պահանջվում է նշել դրանց լատիներեն անվանումները):
27. Թվարկեք արետորական դելիկտները և ներկայացրեք դրանց էությունը (պահանջվում է նշել դրանց լատիներեն անվանումները):
28. Քվազիդելիկտային պարտավորությունների ընդհանուր բնութագիրը և դրանց հիմնական տեսակները:
29. Տվեք պարտավորությունների կատարման ապահովման միջոցների հասկացությունը և թվարկեք այդ միջոցները:
30. Կանխավճարը որպես պարտավորության կատարման ապահովման միջոց:
31. Տուժանքը որպես պարտավորության կատարման ապահովման միջոց:
32. Երաշխավորությունը որպես պարտավորության կատարման ապահովման միջոց:
33. Երաշխավորությունը որպես պարտավորության կատարման ապահովման միջոց:
34. Գրավը որպես պարտավորության կատարման ապահովման միջոց:
35. Գրավի պայմանագրի կնքման կարգը, առարկայի իրացման առանձնահատկությունները և գրավի իրավունքի դադարման հիմքերը:

36. Մեղքը որպես պատասխանատվության պայման, հասկացությունը և ձևերը:
37. Պարտատիրոջ կամ պարտապանի կետանցը, ինչպիսի անբարենպաստ հետևանքներ կարող էին առաջանալ կողմերի համար կետանց թույլ տալու դեպքում:
38. Վնասների հասկացությունը և որոշման կարգը:
39. Պարտավորությունների դադարման հասկացությունը և հիմքերը (պահանջվում է թվարկել բոլոր հիմքերը և դրանց լատիներեն անվանումները):
40. Պարտավորության կատարումը որպես պարտավորության դադարման հիմք:
41. Նովացիան որպես պարտավորության դադարման հիմք:
42. Պարտքի մարումը հաշվանցի միջոցով որպես պարտավորության դադարման հիմք:
43. Պարտավորության առարկա հանդիսացող իրը պահատվության հանձնելը որպես պարտավորության դադարման հիմք:
44. Պարտավորական իրավահարաբերության մասնակիցներից մեկի մահը, պարտապանին և պարտատիրոջը մարմնավորումը միևնույն անձում և պարտքի ներումը որպես պարտավորության դադարման հիմք:
45. Կատարման անհնարիությունը որպես պարտավորության դադարման հիմք:
46. Ձևականացված կամ ֆորմալ պայմանագրերի հասկացությունը և տեսակները:
47. Ստիպուլացիաները որպես հռոմեական իրավունքին հայտնի վերբալ պայմանագրեր:
48. Ինչ էին իրենցից ներկայացնում հիրոգրաֆները և սինգրաֆները:
49. Առուծախի պայմանագրի հասկացությունը և բովանդակությունը:
50. Իրի էվիկցիան և դրա իրավական հետևանքները:
51. Վարձակալության պայմանագրի հասկացությունը և բովանդակությունը:
52. Ենթավարձակալության հասկացությունը և էությունը:
53. Կապալի կամ աշխատանքների կատարման պայմանագրի հասկացությունը և բովանդակությունը:
54. Ծառայությունների մատուցման պայմանագրի հասկացությունը և բովանդակությունը:
55. Հանձնարարության պայմանագրի հասկացությունը և բովանդակությունը:
56. Հանձնարարության պայմանագրի տեսակները:
57. Հանձնարարության պայմանագրի դադարման հիմքերը:
58. Ընկերակցության պայմանագրի հասկացությունը և բովանդակությունը:
59. Ընկերակցության պայմանագրի դադարման հիմքերը:
60. Փոխառության պայմանագրի հասկացությունը և բովանդակությունը:
61. Գույքի անհատույց օգտագործման պայմանագրի հասկացությունը և բովանդակությունը:
62. Պահատվության պայմանագրի հասկացությունը և բովանդակությունը:
63. Պահատվության պայմանագրի տեսակները:
64. Հռոմեական ընտանեկան իրավունքի կողմից ինչպիսի իրավահարաբերություններ էին կարգավորվում:
65. Հռոմեական պետության պատմության ընթացքում հռոմեական ընտանիքի քանի տեսակ է գոյություն է ունեցել, ներկայացրեք դրանց էությունը:
66. Ազգակցությունը հռոմեական ընտանեկան իրավահարաբերություններում ինչ սկզբունքներից ելնելով էր որոշվում:
67. Կոգնատական ազգակցության ինչպիսի գծեր և աստիճաններ էին տարրորոշվում:
68. Հայրական իրավունքի ընդհանուր բնութագիրը:
69. Հայրական իրավունքի ծագման հիմքերը:
70. Որդեգրման հասկացությունը, տեսակները և էությունը:

71. Լեգիտիմացիայի հասկացությունը:
72. Հայրական իրավունքի դադարման հիմքերը:
73. Անուսնության հասկացությունը:
74. Անուսնությունը կնքելու համար անհրաժեշտ դրական և բացասական /բացառող/ պայմանները:
75. matrimonium cum manu-ի և matrimonium sine manu-ի էությունը:
76. Անուսության դադարման հիմքերը:
77. Խնամակալության հասկացությունը և էությունը:
78. Հոգաբարձության հասկացությունը և էությունը:
79. Ժառանգման իրավունքի հասկացությունը և էությունը:
80. Ըստ օրենքի ժառանգումը:
81. Ըստ կտակի ժառանգումը:
82. Կտակի ձևը և բովանդակությունը:
83. Լեգատներ և ֆիդեիկոմիսիաներ:
84. Կտակային սուբստիտուցիայի հասկացությունը և տեսակները:
85. Անհրաժեշտ ժառանգման իրավունքի հասկացությունը և էությունը:
86. Ժառանգության ընդունման կարգը:
87. Իրավունքների իրականացումը և պաշտպանությունը:
88. Քաղաքացիական դատավարության փուլերը:
89. Քաղաքացիական դատավարության տեսակները:
90. Էքստրաօրդինար դատավարությունը:
91. Լեգիսակցիոն դատավարությունը:
92. Ֆորմուլար դատավարությունը:
93. Ղատավորի կողմից կայացվող որոշումները ինչ խմբերի էին բաժանվում:
94. Ինչպիսի մասերից էր բաղկացած ֆորմուլան:
95. Հայցի հասկացությունը և տեսակները:
96. Սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության հատուկ միջոցները:

### **Լուծարքի հարցաշար**

Լուծարքի հարցաշարն իր մեջ ներառում է առաջին և երկրորդ ստուգումների հարցաշարերի հարցերը:

Հռոմեական մասնավոր իրավունք դասընթացի համար  
առաջարկվող պարտադիր և ընդհանուր գրականություն

Պարտադիր գրականություն`

1. Ավետիսյան Վ.Դ., Հռոմեական մասնավոր իրավունք, Երևան, 2013թ. :

Ընդհանուր գրականություն`

2. Բաբայան Լ. Ա., Հռոմեական մասնավոր իրավունք, Երևան, 2000թ.:
3. Բարսեղյան Տ.Կ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս, Երևան, 2009թ.:
4. Андреев М. Римское частное право, София, 1971:
5. Барон Ю. Система римского гражданского права. Санкт-Петербург, 2005:
6. Дождев Д.В. Римское частное право. М. 2000:
7. Кафанов Л.Л. Lex и Jus: возникновение и развитие римского права в VIII-III в.в. до н.э. М. 2006:
8. Римское частное право. Под ред. проф. И.Б. Новицкого и проф. И.С. Перетерского. М. 1999:
9. Покровский И.А. История римского права., М, 1917:
10. Пухан И., Поленак-Акимовская М. Римское право, М. 2000:
11. Памятники римского права, М. изд. Зерцало, 1997:
12. Новицкий И.Б. Основы римского гражданского право, М. 2000:
13. Маяк И.Л. Проблема собственности у Авла Галлия // Древнее право. 2000:
14. Чимма М.Р. Соседские отношения в постклассическом праве: ограничения собственности // Древнее право. 2000:
15. Хвостов В. М., История римского право, М. 1919:
16. S. P. Scott, Roman Civile Law, Oxford, 2007:
17. Bruce W. Frier, A casebook on Roman Family Law, Oxford, 2004:
18. Burdick, William L., The principles of Roman Law and their Relation to Modern Law, New York, 2003:
19. Buckland and Arnold, Roman law and common law, Cambridge, 1952: